



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2016

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ԲԱՆ ԶԲ

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Տէր Աստուած, բարերար եւ բազմապարգեւ Թագաւոր,  
Դուն կեանքի պարսպարանն ես, լոյսի անձնաւորում,  
լայնաբար հանգստարան, որ մեղաւորիս համար մարդացար,  
անպարմելի գործեր կարարեցիր, հրաշքներ գործեցիր,  
մինչեւ որ կարարելութեան հասցուցիր  
մեր բնութիւնը ամենալիր աստուածութեանդ հետ:  
Դուն միայն գթած, բարերար, երկայնամիտ եւ ամենակարող Տէր,  
Դուն միայն անճառապէս զօրաւոր եւ բոլոր անհնարին բաներուն համար,  
քաւելու, փրկելու, կենագործելու, լուսաւորելու, վերահաստատելու,  
անդունդներուն խորերէն բերկրութեան լոյսին բերելու:  
Ամէն հոգի Քեզի կ'ակնկալէ յոյսով:  
Քու ձեռքիդ մէջ է ամենուն կենդանի շունչը:  
Ու Քեզի, Հօրը եւ Սուրբ Հոգիիդ հետ,  
փառք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 4:1-16



Շարունակելով սիրոյ երգը Փեսան կ'ըսէ հարսին.

**«Ղուն գեղեցիկ ես: Քու աչքերդ աղանիներու աչքերուն նման են»:** Այսպէղ նկարագրուածը հարսին կարելի է րեսնել թէ հաւաքացեալ մարդը՝ անհաւաքապէս, եւ թէ եկեղեցին՝ հաւաքաբար:

Փեսան հարսին համար յանձն առնելէ յետոյ թագն ու պսակը, որ իր իսկ փառաւորումն էր խաչելու թեամբ, ու ապա յարութեամբ, այդ բոլորը եկան գեղեցկացնելու հարսին: Փեսան գլխուն փշէ պսակ դնելով հարսն է որ գեղեցկացաւ մեղքի րգեղութենէն, որովհետեւ մեղքի րգեղութիւնը Փեսան իր վրայ առաւ: Ու րակաւին, այս գեղեցկութիւնը առաւել եւս բացայայտուեցաւ աւագանի մաքրութեամբ, որ Մուրբ Հոգիի միջոցաւ նոր ծնունդ սրացաւ: Ահա այս նոր ծնունդն է որ առաւել գեղեցկութիւն կու րայ մարդուն: Մարդը սկիզբը որ սրեղծուեցաւ, այո, Աստուծոյ պարկերին ու նմանութեանը համաձայն, սակայն անհնազանդութեան ու մեղքի պարճառով կորսնցուց այդ գեղեցկութիւնը, բայց հիմա, Փեսային գալուստով, ու մանաւանդ՝ Անոր գոհագործումով հարսը առաւել եւս գեղեցկացաւ քան առաջին գեղեցկութիւնը, որովհետեւ այս անգամ Աստուծոյ որդեգիր գաւակներն ենք:

**«Աչքերդ աղանիի աչքերուն նման են»:** Աղանին որ խորհրդանիշ է միամտութեան, խաղաղութեան, ու մանաւանդ մաքրութեան, որպէսզի այդ աչքերով կարողանայ րեսնել: Ինչպէս պիտի ըսէ Քրիստոս եթէ քու աչքդ առողջ է, ամէն ինչ առողջ կը րեսնես, իսկ եթէ քու աչքդ վար առողջ է ամէն ինչ վարառողջ կը րեսնես: Որպէսզի կարենաս առողջ րեսնել, պէտք է որ հանես աչքէդ գերանը լաւ րեսնելու համար: Իսկ աչքի մաքրութիւնը կու գայ նոյնինքն սրտի մաքրութենէն, երբ մեր խորհուրդները մաքուր են, եւ ոչ թէ արելութեամբ, նախանձով ու բարկութեամբ լեցուն:

**«Քու մագերդ այծերու հօրին պէս»:** Որովհետեւ մագը ինքը անգգայ է, չի գգար, այդպէս ալ հարսը առանց ցանկութեան, անհպարտ, աշխարհէն օտարացած եւ մեռած: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ, *«Ես աշխարհին համար մեռած եմ: Աշխարհը ինձի համար խաչ է եղած, ես աշխարհին համար խաչ եմ եղած»:*

**«Արամներդ խուզուած ոչխարներու պէս են»:** Արամներու մաքրութիւնը որոնք կը նմանին խուզուած ոչխարներու, որ կը նշանակէ մեղքէն թերեւցած: Միւս կողմէ, արամներուն դերը պարառելու ու ծամելու աստուածային խորհուրդները: Դարձեալ Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. *«Հիմա դուք երեխաներու նման կայծով կը սնանիք, բայց երբ արամներ ունենաք կարծր ուրելիք ուրելու»:* Այս պարագային աստուածային ծրագիրներն ու խորհուրդները եթէ կ'ուզենք հասկնալ պէտք է որ արամներ ունենանք, սակայն մեղքէ թերեւցած, այլապէս չենք կրնար հասկնալ:

**«Շրթունքներդ կարմիր դերձանի պէս են»:** Շրթունքներդ կարմիր գոյնով ներկուած են, որ կը նշանակէ Քրիստոսի արիւնով ներկուած ու մաքրուած: Միւս կողմէ, այդ շրթները նաեւ փառաբանելու, պարսմելու ու վկայելու: Ինչպէս պիտի ըսէ Դաւիթը. *«Տէր, եթէ շրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ գօրհնութիւնս քո»:* Եւ ահա այդ շրթերով է որպէս դերձան որ մարդիկը հրաւիրէ Աստուծոյ:

**«Այրերդ նուռի կեղեւի կը նմանին»:** Նուռը երկու բնութիւն ունի. արտաքնապէս կարծր, իսկ ներքնապէս ախորժելի եւ առողջարար: Նոյնպէս ալ Եկեղեցին արտաքնապէս կարծր ըլլալու է, իսկ ներսը կայ հաւաքը, յոյս եւ սէր առ Աստուած:

**«Սքիւնքներդ նման են երկու ուլերու»:** Մարդը երկու բնութիւն է որ ունի մարմնաւոր եւ հոգեւոր: Իսկ մարմինը ունի երկու աչք հոգիի եւ մտքի աչքեր, որ ընտրութեամբ կ'արածի փուշերը ձգելով եւ շուշաններէն սնուելով, այսինքն՝ հոգեւոր կերակուրներով:

**«Ես գմուռսի լերան ու կնդրուկի բլուրը պիտի երթամ»:** Այս րողը կ'ակնարկէ Փեսան ինքզինքին, որ առանձինն պիտի երթայ մահուան իր հետ ունենալով Իր աստուածային բնութիւնը: Բայց այս մահը նաեւ իր հետ անուշահոտութիւն կը բուրէ, ինչպէս կնդրուկը:

Շարունակելով սիրոյ երգը Փեսան կ'ըսէ հարսին.

**«Ով իմ հարսս, ինձի հետ Լիբանանէն եկուր»:** Կը նշանակէ մեղքով անտարացած րեղէն եկուր, որպէսզի Փեսան մաքրէ ու սրբէ ամէն մեղքէ ու արարէ: Լիբանանը նաեւ կը խորհրդանշէ որպէս մեղքով լեցուն վայր: Հարսը՝ Եկեղեցին այնքան գեղեցկացաւ Փեսայի խաչելութեամբն ու մահուամբը, որուն գեղեցկութիւնը զգլխիչ դարձաւ: Եւ այդ գեղեցկութիւնը սրացաւ սիրայօժար եւ կամովին, մրնելով Քրիստոսի լուծին րակ: Եւ ահա այդ գեղեցկութիւնը կամաց-կամաց նաեւ պիտի աւելին ըլլար կարէն դէպի գինիի փոխարինուելով:

Կաթը խորհրդանիշ է սնունդի, բայց մանուկներու յափուկ, որմէ յետոյ հաւաքքի կապարելութեան հասնելու համար: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. *«Իբրեւ մանուկներ Քրիստոսի, ձեզ կաթ ջամբեցի, եւ ոչ հասարարուն կերակուր»*: Հաւարացեալ մարդը եւս սկզբնական շրջանին կաթով կը սնանի, որմէ յետոյ է որ կարենայ կարծր ուրելիք ուրել: Եւ ինչպէս գինին զուարճութիւն կը պարճառէ խմողին, նոյնպէս ալ ասարուածային կապարեալ գիտութեան հասածներուն համար Սուրբ Հոգիին շնորհքները ուրախութիւն եւ հրճուանք կը պարճառեն:

Տակաւին, ինչպէս պիտի ըսէ Դաւիթ. *«Քու խօսքերդ իմ քիմքիս մէջ մեղրէն աւելի քաղցր են»*: Ահաւասիկ երբ Հարսը՝ Եկեղեցին Աստուծոյ խօսքն ու պարգաւմներն է որ կը փոխանցէ, լսողներուն համար այդ պարգաւմները մեղրէն աւելի քաղցր են:

**«Զգեսարներդ անուշահոտութիւն ունին»**: Ընդհանրապէս զգեսարը խորհրդանիշ է նկարագրի, հետեւաբար, հաւաքացեալներուն զգեսարները անուշահոտութիւնն են, ինչպէս նաեւ ընդունելի է Աստուծոյ: Այնպէս ինչպէս պիտի ըսէ Դաւիթ. *«Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր»*: Եւ փակաւին, Պօղոս Առաքեալը պիտի աւելցնէ ըսելով. *«Ձեր անձերը ընծայեցէք Աստուծոյ զոհաստեանին որպէս անուշահոտ խունկ»*: Ուստի, եթէ երբեք մեր անձերը ընծայենք Աստուծոյ, Աստուած զանոնք պիտի ընդունի իբրեւ անուշահոտ խունկ, ընծայ, որովհետեւ Աստուծոյ ուզած պարարագը, ընծան, նուէրը բանաւոր պարարագն է:

**«Փակեալ պարտեզ մըն է, եւ կնքուած աղբիւր»**: Պարտեզ հոն ուր ուրելիք կայ: Աղբիւր ուրկէ ջուր կը վերցնեն: Այս պարագային Հարսը՝ Եկեղեցին կը նմանի պարտեզի եւ աղբիւրի, որովհետեւ այնպէս կայ հոգեւոր ուրելիք եւ ըմբայելիք, սակայն, պէտք է նաեւ փակուած ըլլայ, որպէսզի օտար հօտերու համար ուրելիք եւ ըմբայելիք չդառնայ: Ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. *«Զգոյշ եղէք, որպէսզի ձեր մարգարիտները խոզերու առջեւ չնետէք»*:

Փեսան մէկ առ մէկ կը նշէ այդ պարտեզին մէջ եղածները՝ քաղցրահամ պտուղներով, կնդրուկի ծառով, զմուռսով ու հալուէով: Այս բոլորը ցոյց կու փան թէ Հարսին մէջ՝ այսինքն Եկեղեցւոյ մէջ կան այնպիսի պտղաբու ծառեր, որոնք ուրիշ բան չեն եթէ ոչ Սուրբ Հոգիի պտուղները, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալը. *«Գուր, ողորմութիւն, հաւատք, յոյս, սէր, հեզութիւն, խոնարհութիւն, քաղցրութիւն, եղբայրսիրութիւն, անոխակալութիւն, սրբութիւն»*:

Տակաւին, Հարսը այնքան գեղեցկացաւ եւ Պարտեզի նմանեցաւ, եղաւ Պարտեզներու համար աղբիւր, Կենդանի ջուրի ջրհոր, որ կը նշանակէ նաեւ ոռոգելու ուրիշներու պարտեզները եւս այն Կենդանի ջուրով, որ Սուրբ Հոգին է:

**«Արթնցիւր, ով հիւսիս, եկուր, ով հարաւ»**: Այն երկու կողմերն են, որոնք խորհրդանիշ են, մէկը՝ հիւսիսը չարին ու անոր հետեւորդներուն եւ խորհուրդներուն, որոնք հեռու են Արեւու ճառագայթէն եւ որու պարճառով ալ միշտ սառոյց է այնպէս, նոյնպէս ալ Չարին հետեւորդները հեռու են Արդարութեան արեգակէն, ուստի մեղքերով սառած, եւ երբեք չեն հալիր, գոչար, որպէսզի արդարանան: Իսկ հարաւը, որ աւելի ջերմ ու փաք է: Ուստի կը հրամայէ որ հիւսիսը հեռանայ, իսկ հարաւը գայ, այսինքն՝ Սուրբ Հոգին իր ջերմութեամբ: